



Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

(Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, դոցենտ)

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ «ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ» ԳՐԹԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հեռավոր Բուենոս-Այրես քաղաքում 1951 թվականին լույս է տեսել Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» գրքի արևմտահայ թարգմանությունը, որ նվիրված է «Սրբոց Վարդանեց դյուցազնամարտին 1500-ամյակի նշատակին»։ Գիրքը գրաբարից թարգմանել է Գարեգին Կալիսկոպոս Տրապիզունին, Կոստանդնուպոլսի հայոց ներկա պատրիարքը, որը հայ հին գրականության ծանոթ մարդկանց հայտնի է հանճարեղ նարեկացու «Մատենան ողբերգութեան» գրքի իր հմուտ թարգմանությամբ և այլ ուսումնասիրություններով։ Ինչպես խնդրո առարկա հանդիսացող «Եղծ աղանդոց»-ի, այնպես էլ «Մատենան ողբերգութեան»-ի թարգմանությունը ողջունելի է և արժանի ամեն գովասանքի։

Եզնիկի «Եղծ աղանդոց» գիրքը հայ բանասիրությանը հայտնի դարձավ 1762 թվականին և հենց այդ ժամանակից էլ արժանացավ մեծ ուշադրության։ Այսօր Եզնիկի գրքի բովանդակությունը մեզ համար միայն պատմական արժեք ունի, ուստի այն հանգամանքը, թե Եզնիկը իր գիրքը գրելիս ձեռքի տակ է ունեցել հունական կամ ասորական աղբյուրներ և կամ այդ աղբյուրներից բառացի քաղվածներ է արել, բնավ էլ չի փոխում մեր ակնածանքն ու գնահատականը նրա անձի ու գործի նկատմամբ։ Դասական այն ոճը, որ մշակել է նա, մեր հին գրական լեզվի զարգացման այն բարձրակետն է, որին չհասավ ոչ ոք նրա հետևորդներին։ Իսկ ինչ վերաբերում է նախորդներին, ապա նա սրանց մեջ առաջիններից էր և գուցե ամենից շատ զարգացած ու կատարելագործվածը։

Ավելի պարզ ասենք, մեզ հայերիս համար անգնահատելի ու անմեծ նշանակություն ունի այն լեզվի գրավոր կենդանագրությունը,

իրացումը, որով գրված է հիշյալ երկը։ Բաների ընտրությունը, տեղին ու ոճական արվեստով կիրառությունը հոմանիշների նուրբ գույքորդություններով ցույց է տալիս, որ մենք գործ ունենք դասական կրթություն ստացած, լեզվական մշակույթի արվեստը տիրապետած մի մարդու հետ, որի մեջ ամեն զգացողություններից բարձրը հայոց լեզվի ներբությունները ընկալելու զգացողությունն է։ Եվ արդարև Եզնիկ Կողբացու գրքույկը կարճալիս մարդ զարմանում է, թե ինչպես մի քսանամյակում գրական լեզուն կարող էր բարձրանալ զարգացման այդպիսի աստիճանի։

Մեր ոսկեդարյան լեզվի քերականության ողջ մակարդակը իր օրինակելի կատարելությամբ կարելի է ուսումնասիրել Եզնիկի այս փոքրիկ երկով։ Արարատյան հայության ստեղծած լեզվի նյութական ու ոճական գանձերը Եզնիկը օգտագործել է աննախընթաց ճարտարությամբ՝ մշակելով բանավիճելու, երևույթների էական կողմերը ամենասեղմ կերպով ներկայացնելու պատմողական ու քննադատական ոճ՝ յուրահատուկ հակադրություններով, շարահյուսական նուրբ կապակցություններով ու փոփոխություններով։ Մեր ոսկեդարյան լեզուն երկու հիմնական հատկանիշ ունի. որոշ թարգմանություններ կամ ինքնուրույն գործեր պարզունակ են. աչքի է զարնում լեզվի խոսակցական անկապակցությունը, շարույթների միմյանց հետ ունեցած տրամաբանական անհետևողությունը։ Յուրաքանչյուր նախադասություն կամ կապակցություն մի առանձին միավոր է ներկայացնում, առանց մյուս միավորի հետ լեզվական, ուստի նաև տրամաբանական կապակցության. եթե նույնիսկ այս վերջինը առկա է, սակայն լեզվի շարահյուսական

ձևավորումը բացակայում է: Այս դիտողությունը բացարձակորեն լպիտք է հասկանալ: Համեմատի՛ր Ս. Գրոց և Բյուզանդի լեզվի շարահյուսական իրողությունները:

Մի այլ խումբ գրքեր գրված կամ թարգմանված են հունարենի հետևողությամբ և շարահյուսորեն հարազատ չեն մեր լեզվի ոգուն: Դրանց լեզուն կամ արհեստականորեն խրթնացվել է և կամ թարգմանիչները հմուտ չլինելով հայերենին, կուրորեն թարգմանիչ են հունարենի շարահյուսությամբ. երկու յեպզում էլ այդ կարգի գրականության մեջ անցել են հայերենին խորթ անկանոնություններ, անվերծանելի նախադասություններ և արտահայտություններ, հայերենին խորթ շարահյուսական ձևեր:

Եզնիկի լեզուն բացարձակորեն զերծ է հիշյալ երկու թիրություններից: Ծարահյուսական միավորները իրար հետ կապված են տրամաբանական հետևողությամբ, բնական ու կենդանի բազմազանությամբ, զրական լեզվին հատուկ վայելուչ շարահյուսությամբ: Եզնիկը գրելիս նկատի է ունեցել մինչև անգամ հայերենի բարենշնչությունը, կշռույթը և հնչերանգության համակարգը: Եզնիկի գիրքը շնչում է հայեցիությամբ: Ժողովրդի կենդանի, հարազատ ու հարուստ խոսքը գրական մշակությամբ ու կազմակերպվածությամբ տվել է լեզվական մշակույթի զլուխ-գործոց: Այս տեսանկյունով Եզնիկի գիրքը բացարձակորեն ինքնուրույն է և հայ հարուստ ու ծաղկած լեզվի անմեռ ու հավիտյան խոստուն վկան:

Երեք տարի է մնացել, որ լրանա հիշյալ գրքի հայտնաբերման երկու հարյուր տարին. երկու հարյուր տարվա ընթացքում փորձ չի արվել այն աշխարհաբար թարգմանելու: Պատմական զարմանալի պատահականությամբ է փրկվել այդ գիրքը. Էստահականություն ենք ասում, որովհետև մինչև այժմ էլ միայն մի ձեռագիր կա աշխարհում, իսկ այդ ձեռագիրն էլ 1845 թվականից մինչև 1902 թիվը կորած էր համարվում: Այժմ այդ ձեռագիրը 1111 համարի տակ գտնվում է Երևանի Մատենադարանում: Եզնիկը ոչ միայն մինչև այժմ չէր թարգմանվել աշխարհաբար, այլև չկա գիտական հրատարակություն: Առաջին հրատարակությունը չափազանց սխալաշատ է, մյուս հրատարակություններից լավագույնը Վենետիկի հրատարակությունն է, որը սակայն նույնպես զերծ չէ սխալներից:

Ներկա թարգմանությունը հրատարակված է բնագրի ղուգադրությամբ: Ցանկալի կլինեի, եթե տողատակ բերվեին ձեռագրի բոլոր տարբերակները: Այս հրատարակությունը առաջին հրատարակության հետևողությամբ ներկայացված է հատուկ վերնագրե-

րով, որ օգնում է բնագրական առանձին նյութերի զանազանմանը:

Դեռ ուսանողության առաջին տարիներից հատուկ սեր տածելով Եզնիկի այս գործի հանդեպ և նախանձախնդիր լինելով նրա անթերի հրատարակության գործին ու մանավանդ թարգմանությանը, կուզեինք այս թարգմանության առթիվ հաղորդել մեր մի շարք դիտողություններ, որոնք գուցե ապագայում օգտակար կլինեն կամ այս թարգմանության վերահրատարակության և կամ նոր թարգմանության համար: Եթե մեր արած մի շարք դիտողություններից միայն մի քանիսը ճիշտ լինեն և նպաստեն Եզնիկի այս սրբամատյանի ուղիղ հասկացմանը, մենք բարոյապես վարձատրված կլինենք: Չմոռանանք նշել նաև, որ բարձր ենք գնահատում թարգմանի աշխատանքն ու հմտությունը: Այժմ բերենք մեր դիտողությունները:

Էջ 10. «Բազում արքա ալագ վասն նորին խնդիրս մեծամեծս արարին» նախադասության մեջ ալագ բառը պետք է թարգմանել իմաստուն, գիտուն, այլապես մնում է անհասկանալի: Համեմատի՛ր 115 էջում գրված հետևյալ հատվածը. «Քանզի և ոչ տղայոյ ոք հաստատուն կերակուր տայ, և ոչ մեծամեծ խորհուրդս յայտնէ, և ոչ աւագ բանս խօսի, մինչև ի կատարեալ շափ հասակին հասանիցէ»: Առաջին օրինակի մեջ ալագ մնացել է նույնությամբ, ուստի պետք է հասկանանք՝ տարիքով մեծ, ոչ կրտսեր. իսկ երկրորդ օրինակի մեջ հետաքրքրող կապակցությունը թարգմանված է «ոչ ալ մեծ խոսքեր կրեն», ուր մեծ խոսքեր կապակցությունը անհասկանալի է. պետք էր թարգմանել՝ ոչ էլ խորիմաստ (իմաստուն) խոսքեր է խոսում:

Էջ 11. Եզնիկի ռոստ նմին օրինակի պարտ էր խնդրել որպէս զատ ինչ ի նմանէ, որպէս զանասունս ի մէջ օդոյ՝ որք ի նմա են և զատուցեալք ի նմանէ, թէ իբրև ի տեղուոջ՝ որպէս ջուրք յերկրի» նախադասության մեջ զատ ինչ կապակցությունը փոխված է զատիչ բառով, որով և ամբողջ նախադասությունը աղավաղվել է: Եզնիկը ասում է. «Եթե հյուներն Աստծու մեջ էր, նրանից ինչ որ կերպով զա՞տ էր, ինչպես անասունները օդի մեջ, որոնք նրա (օդի) մեջ են, բայց և զատ են նրանից, թե այնպիսի մի տեղում էր, ինչպես ջրերը հողի մեջ». այսինքն ջրերը հողի մեջ են, բայց զատված չեն նրանից, այլ ներծծված են նրա մեջ: Ի դեպ նշենք, որ երկիր բառը այստեղ պետք է թարգմանվեր հող:

Էջ 12. «Որ անհնարին անօրինութեանն է» նախադասությունը բնագրում փոխված է «որ անհնարին անօրէնութիւնն է». այսպիսի փոփոխությունը չի պատճառաբանված: Համեմատի՛ր հետևյալ նախադասությունը՝ «Որ

անհնարին յիմարութեանն է» (էջ 111): Այսպիսի դարձվածքը գրաբարին հարազատ շերտաբանություն է և նշանակում է «Որ շեղած անօրէնությունն է հատուկ» և այլն: Պետք է նշել նաև, որ մեր բերած և թարգմանչի բերած ձևերի մեջ ու հարաբերականը ավելորդ է: Իսկ այդ նույն տեղում ինչ-որ թյուրիմացության պատճառով բաժանելի բառը թարգմանության մեջ դարձել է անբաժանելի:

էջ 15. «Եւ զկէսն նորա եթող նոյնպիսի՝ յապականութիւն լինելոյ բարոք արարածոցն»։ Այս նախադասության վերջին մասը թարգմանված է «որպեսզի ապականե բարի արարածները», ստացվում է այնպես, որ Աստված է ոչնչացնում բարի արարածները, մինչդեռ հեղինակի միտքն այն է, թե «մարախառն դուրսը թողնց նույնությունը՝ ապականել լինելու բարի արարածների համար»:

էջ 18. «Նոյնպէս և յաստուածապաշտութեան յօրինակէ անտի ցուցանի չարութիւնն» նախադասության մեջ յաստուածապաշտութեան փոխված է աստուածապաշտութեան ձևով և ամբողջ նախադասությունը թարգմանված է՝ «Աստվածապաշտության մեջ ալ անոր կերպին երևան կուգա չարությունը: յաստուածապաշտութեան ձևը սեռական է և ոչ ներգոյական։ Ներգոյականով թարգմանությունը նախադասությունը դարձրել է անհասկանալի: Ընդհանրապես թարգմանությունն է. «Աստվածապաշտության օրինակից (օրինակով) էլ երևում է չարությունը»:

էջ 20. «Պահանջէ զուսումն, յոր աւանդեցաւ» նախադասությունը թարգմանված է. «կպահանջե ան ուսումը որ ավանդվեցավ իրեն»։ Եզնիկը բոլորովին հակառակ ձևով է արտահայտել իր միտքը. պահանջում է այն ուսումը, որին (տղան) հանձնվեց:

էջ 21. Եզնիկը գրում է. «Եթէ զնորա ինչ հանեալ էր և մարդոյն շնորհեալ»։ Թարգմանիչը ներդրածական սեռի ստորոգյալը կրավորական է հասկացել և թարգմանել է կրավորական ձևով. «Եթե անկե (նախանձորդին) բան մը հափշտակված ըլլար և մարդուն շնորհված...», իսկ այս կրավորականն էլ հասկացվում է չեղոք նշանակությամբ, որովհետև հափշտակողը մեջտեղում չկա, ուստի ամբողջ նախադասության նշանակությունը ղօգտնացել է, ու այն հակադրությունը, մանավանդ ամբողջ խոսքի առարկան անհայտացել է: Հիշյալ նախադասությունը պետք է լիներ այսպես. «Եթէ Աստուծոյ զնորա ինչ հանեալ էր և մարդոյն շնորհեալ...»: Այս կարգի նախադասությունների մեջ ենթակայի սղումը սովորական երևույթ է: Այստեղ Աստված ենթակա է և անպայման պետք է հիշատակվի, որովհետև ամբողջ խոսքը վերաբերում է նրան:

էջ 30. «Զինչ շար քան զօժ կայցէ և ի նմանէ թերիակէ և ի սպանող դեղոց, որք ի նենգությունէ մարդկան կազմեցան, չե հասուցեալ և անդէն բուժէ»։ Այս նախադասության վերջին մասը թարգմանված է այսպես. «...Եւ անկե կհանեն թյուրակե, որ կբուժե, երբ մարդոց նենգությունը կազմված սպանող դեղերը դեռ իրենց դերը չեն կատարած»։ Եզնիկի այս նախադասությունը այդ միտքը չունի: Պետք է թարգմանել հետևյալ ձևով. «... Նրանից (օժից) թյուրակե է դուրս գալիս և մարդկանց հնարամտությամբ կազմված մահացու դեղերից բուժում է անմիջապես՝ դեռ չհասցրած»:

Միևնույն էջի առաջին տողում գտնվում չարագործութեան պետք է թարգմանել չարագործ անուն կամ չարագործի անուն:

էջ 40. Նույնպես և այլոց սակաւուց տանջանօք՝ ածէ յերկիւղ և ի խրատ զբազումս, յորժամ դիպիցէ անմեղօք, և յորժամ դիպիցէ մեղաւորօք, որպէս ինքն միայն ճարտար գիտէ» նախադասության վերջին մասը թարգմանության մեջ մնացել է անհասկանալի. օրինակ... «Այդ պատահի անմեղներուն, թե մեղավորներուն, ինչպես ինքն միայն գիտե»։ Պարզ թարգմանությունը վիճելի կտորի հետևյալն է. «Երբեմն պատահում է (խրատում է) անմեղներով և երբեմն մեղավորներով, թե ինչպես, ինքն է միայն ճարտարուն իմանում»:

էջ 42. «... Զի հանապաղ խեղդ ընդ անձն հոգւոց մարդոյն դէն լինիցի: Եւ արդ քան անդէն կապել կախարդացն զդէն, որպէս ասենն, և խեղդ ընդ անձն միշտ ոգւոց մարդոյն առնել...»: Առաջին նախադասությունը թարգմանված է. «Վասնզի դեր միշտ խեղդելու աստիճան կենդ մարդուն հոգին»։ Երկրորդ նախադասության վերջին մեղ հետաքրքրող մասը գրեթե նախորդի նման է. «և խեղդելու աստիճան կենդին մարդուն հոգին»։ Այստեղ անհասկանալին և թյուրիմացության տեղիք տվողը խեղդ ընդ անձն կապակցությունն է, որ նշանակում է պարանանդ (կապված), ավելի ճիշտ՝ օձիբից պարան, վրից կապ: Ըստ այդմ վերի նախադասությունը պետք է թարգմանել. «Որպեսզի դեր միշտ մարդու հոգու օձիբին կապ լինի»։ Համեմատելով հետևյալ նախադասությունը. «Բայց քանզի այսու իմն մեծարոյ երևին առաջնորդք քէշին իրեանց հնազանդեցելոցն, և խեղդ ընդ անձն արկեալ, ձգեն զնոսա ի խորխորատ» (էջ 57):

էջ 54. «Զհիւղայն կարծիս, որովք յոյնք մոլորեցան, բաւական համարեացուք առաջնոց բանիցն յանդիմանութեամբ վճարել»։ Բերված նախադասությունը թարգմանված է՝ «Հյուլի մասին կարծիքը, որով հույները մո-

լորեցան, բավական համարենք նախնյաց խոսքերու քննության մասը հերքել: Նախադասության սկզբի մասը ճիշտ է, անմեկնելի է մնացել վերջին մասը, որ պետք է թարգմանել ապաստան: «Բավական են համարում են խոսքերի խոսքերի հակադրության վերջացնել»: Այդ երևում է ոչ միայն նրանից, որ գլուխը վերջանում է, այլև հաջորդող նախադասությունից: «Իսկ պարսից կրոնը գտնողների դեմ պայքարի կմտնեն» Աստուծո շնորհներին ապավինելով:

Էջ 57. Այստեղ թարգմանված է այսպիսի վերաբերմունքով, այնինչ նշանակում է այստեղանկալի: Նույն էջում «Եւ խեղդ ընդ անձն արկեալ ձգեն...», վերևում արդեն բացատրեցինք, նշանակում է վիզները պարանձգած քաշում են և ոչ թե՛ սաստիկ նեղելով կենտեն:

Էջ 72. Անթարգմանելի է մնացել նաև ծղնիկի հետևյալ նախադասությունը: «Զի է ի նոցանէ, որ զմեզ աշխատ առնէ, և է ինչ, որ մերումն վնասակար լինի», որ պետք է թարգմանել: «Նրանցից կան այնպիսիները, որ մեզ են վնասում (տանջում) և կան այնպիսիները, որ մեր ունեցվածքի համար են վնասակար լինում», մինչդեռ թարգմանված է. «Զի ա-նոց մեջ կան, որ կենդան և կան, որ կվնասեն»:

Հաջորդ 73 էջում ծղնիկը թվում է ընտանի և ապա վայրի կենդանիներին. վայրի կենդանիների թվում հիշված է նաև գառին բա-որ որ առն (վայրի ուշխար) բառի հոգնակի հայտնական է. չգիտենք, թե ինչ թյուրիմացություն բառից գառին ձևը դարձել է գառներ:

Էջ 85. «Որպէս ձիոյն՝ ի սմբակէն վարելոյ» նշանակում է՝ ձիու սմբակով ղոփելուց կամ ձիու սմբակով ֆանդելուց: «Զիին՝ սմբակի ֆալվածքեն» թարգմանությունը անիմաստ է: Այդպես էլ անհասկանալի է մնացել հաջորդ 86 էջի «Յորժամ ոտն կծիցէ կամ ձեռն», նշանակում է՝ երբ ոտքի տակը կամ ձեռքի ակը բոր է գալիս: Այս ըմբռնումը մինչև այժմ էլ կենդանի է հայ գյուղերում: Գոնե մենք առաջարկված թարգմանությունը չենք հասկանում. երբ ոտքը կնույն կունենա կամ ձեռքը:

Էջ 88. «Դաս ինչ է դիւաց, որ ըստ լուսնոյ յայտնին». ըստ լուսնոյ յայտնին բացատրված է՝ լուսնի նման կհայտնվին: Մենք ըստ լուսնոյ հասկանում ենք ոչ թե լուսնի նման, այլ՝ լուսնի երևալով, լուսնի հայտնվելով, իսկ յայտնին պետք է եզակի համարել. վերջին և-ն հոդ է:

Էջ 93. «Եւ զայն ոչ գիտեն, թէ զօդոյն, որ ցայգ ունու ի խոնաութենէ ջուրց, հասեալ շերմութեան ճառագայթից արեգականն, շթեցուցանէ ի բաց զտամկութիւնն»: Այս

նախադասության թարգմանությունը նույնպես պակասավոր է. «Եվ չեն գիտեր, որ արեգակի ճառագայթներու շերմությունը հասնելով՝ ջուրերու խոնավութենեն ուռած օդը դուրս կցայտեցնեն»: Ծիշտ թարգմանությունը հետևյալն է. «Եվ այն չեն իմանում, որ արեգակի ճառագայթների շերմությունը հասնելով գիշերը ջրերի խոնավությունից առած օդի տամկությունը հեռու է ցնդեցնում»: Այս նախադասության դժվար հասկանալիությունը կապված է հատկացուցիչի (զօդոյն) և հատկացյալի (զտամկութիւնն) շարադասության հետ, որոնք իրարից բաժանված են ամբողջ նախադասությամբ:

Էջ 94. Ծղնիկի պատճառաբանությամբ, «Եւ եթէ երկինք շրջիցին, զիա՞րդ զՎոռնայն և զայլոց աստեղաց պատճառաբանաց ասիցեն յաստեղատունսն մտանել» նախադասության մեջ պետք է հասկանալ պատճառ եղող, պատճառ հանդիսացող: Ծղնիկը ժխտում է այն ըմբռնումը, ըստ որի «Յորժամ առիժն իցէ յաստեղատանն, թագաւոր ծնանելոց է... Եւ եթէ առիժն էր՝ պատճառ ծննդեանն թագաւորաց, ապա ոչ թագաւորի որդի թագաւոր լինէր, այլ ոչ ուրուք և դիպէր ծնունդ մտանելոյ առիժուն յաստեղատունն»: Հենց այս վերջին պատճառ բառից ծղնիկը կազմել է պատճառաբան, որ թարգմանված է ստեղծված:

Էջ 101. «Իսկ պղատոնեանքն Աստուած և հիւլ և իդոս, որ առաջինն՝ նիւթ է, երկրորդն՝ առանձինն ինչ ուրուք»: Թարգմանությունը հետևյալն է. «Իսկ պղատոնականները Աստված նկատեցին և հյուլեն և իդոսը. առաջինը նյութ է, և երկրորդը՝ առանձինհատուկ բան մը»: Նախադասության սկզբում ստորոգյալը պակասում է, և դա թյուրիմացության տեղիք է տվել. ոչ թե պղատոնականները հյուլեն ու իդոսը Աստված են նկատում, այլ երեք բան են ընդունում (դենն)՝ Աստված, հյուլ և իդոս: Պղատոնի մոտ իդոս նշանակում է ձև, ուրեմն Պղատոնը ընդունում է Աստված, նյութ և ձև: Հունարենի Ξεδοσ (ձև) բառը ծղնիկը շփոթել է Ξεδοσ (հատուկ, սեփական) բառի հետ, ուրեմն առանձինն ինչ ուրուք=սեփական որևէ մեկին. սեփական՝ հատուկ և ոչ թե առանձինհատուկ բան մը:

Մեր անցողակի դիտումները ցույց են տալիս, որ կան նաև մասնակի բացթողումներ. օրինակ՝ Տայ ամենայնի կենդանութիւն և ինքն կայ լի և յանսպառ կենդանութեան ամբողջ տող ու կես բաց է թողնված (էջ 3): Այդպես 47 էջում պակասում է բացահայտիչ գնդեղաձև, գլխաց, զմարդկան բառերի թարգմանությունը: Զի թարգմանված նաև «Զի բանն ի յոյն լեզու յերկոսին հարկանէ» (էջ 130):

Թարգմանիչը որոշ դեպքերում հերքել է ձեռագրի բնթերցվածները և պետք է ասել, որ միանգամայն ճիշտ է վարվել ու ճիշտ է թարգմանել բնագիրը: Ցանկալի էր, որ ամենուրեք հետևողական լինեիր Այսպես՝ «Իսկ եթե արաշի այն գործ է՝ զբնութիւն առնել և ոչ արդս և զարդս և կերպարանս...», տպագիրը այս նախադասության և ոչ դարձրել է և ոչ միայն ու աղավաղել է Նդնիկի նախադասության իմաստը: Վերևում Նդնիկը հակադրվելու համար ասում է. «Զի տեսանեմք զաշխարհս ի պէսպէս կերպարանս և ի զարդս և ի յարդս, ապա ուրեմն կերպարանաց և զարդուց արարիչ է Աստուած և ոչ բնութեանց»: Իսկ ներքևում իբրև հակադրություն բերում է վերևի նախադասությունը. Նդնիկը հակադրում է և ոչ թե զուգադրում. ուրեմն միայն բացարձակապես ավելորդ է և պետք է հանվեր բնագրից (տե՛ս էջ 12): Մի ուրիշ օրինակ ևս. Նդնիկի ձեռագիրն ունի «Եթէ ասիցեն, եթէ ի լաւ (արար զանկերպարանն), զշարիսն որ լինին, պարտին խնդրել, թէ

ուստի՞ լինին, արգասիքն ոչ նոյնպիսի մնացին, որպէս և էին, այլ ի լաւն դարձեալ, լաւք ևեթ երեսացին»: Արգասիքն բառից առաջ ավելացրած է ուրեմն, իսկ այլ բառից հետո՝ զի: Գտնում ենք, որ երկու լրացումներն էլ ավելորդ են. ոչ այդտեղ նշանակում է չէ, չէ՞ արգասիքը նույնպիսին չմնաց, այլ լաւ դառնալով միայն լաւ պետք է երեւար: Ի դեպ թարգմանիչը երեւել բայի ժամանակը խախտել է, ուստի իմաստը ճիշտ չէ արտահայտվել (էջ 14): Բաղմաթիվ են այսպիսի կամայական հավելումները, որոնք մի առ մի այստեղ հիշատակելը դուրս է մեր նպատակից:

Այս թուուցիկ քննությունը մի ավելորդ անգամ ևս ապացուցում է, որ Նդնիկի բնագիրը սպասում է իր քննական հրատարակությանը, և որ եղած հրատարակությունները սրանից հետո չեն կարող մեր բանասիրության պահանջները գոհացնել: Իսկ ինչ վերաբերում է նոր թարգմանությանը, ապա այդ պետք է կատարել քննական հրատարակությունից հետո կամ զուգընթացաբար:

